



0901 ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱՐՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<<03>> 03 2014թ. N 01/08/682-14

**<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, <<ՀԵՏՔ>> ԹԵՐԹԻ
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՊԱՐՈՆ Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետարանի հասցեագրած Ձեր 24.02.2014թ. N-հ73-հ3 գրության տեղեկացվում է՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում 2014թ. իրականացվել են հաստիքների կրճատումներ մարզպետարանի ենթակայության թվով 112 դպրոցներում՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության և ՀՀ ֆինանսների նախարարների համատեղ 2014թ. հունվարի 20-ի հրամանը (կցվում է), որը պայմանավորված է դպրոցի աշակերտների թվով:
2. Հաստիքների կրճատման հետևանքով կրճատվել են 100 վարչական և 120 ուսումնաօժանդակ (սպասարկող) հաստիքներ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ կրճատման արդյունքում աշխատողներ աշխատանքից չեն ազատվել, այլ նվազեցվել է նրանց ծանրաբեռնվածությունը:
3. ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության դպրոցներում կրճատումներից հետո նոր աշխատողներ աշխատանքի չեն ընդունվել:

Առդիր 2 թերթ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Գ. Սայադյան
Հեռախոս՝ 0237/22035

զր ճ 29.01.2014թ
կայ՝ 11814031

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

«20» «հունվարի» 2014 թ.
ք.երևան N 51 -Ն

«20» «հունվարի» 2014 թ.
ք.երևան N 30 -Ն



Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

2014 թ. ՎԱԿԱՆԻՆ ԸՍՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԲԱՆԱՁԵՎԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման 2-րդ կետը՝

հ Ր ա մ ա յ ու մ ե նք՝

1. Հաստատել 2014 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի՝

$Ըզ = Սթ \times Սզ + Պզ$, գործակիցները, հետևյալ չափերով.

Սզ՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 121097 դրամ,

Պզ՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը՝ մինչև 100 աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար՝ 16876.0 հազ.դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը): 101-ից մինչև 300 աշակերտ ու 301 և ավելի աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է 2 մասից՝ հաստատության պահպանման ծախսերից՝ 3239.1 հազ.դրամ և, աշակերտների թվաքանակից ելնելով, ըստ դպրոցների հաշվարկված ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից:

2. Հաշվարկը կատարելիս՝ կիրառվում են գործակիցներ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով՝ տարրական մակարդակի համար՝ 0.80161 գործակցով, միջին մակարդակի համար՝ 1.11424 գործակցով, ավագ մակարդակի համար՝ 1.15432 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով